

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
23-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ**

21.09.2014



Միրելի հայրենակիցներ:

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության գլխավոր տոնի՝ Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առթիվ: Մեր ժողովրդի դարավոր երազանքը՝ Հայոց անկախ ու ազատ պետականությունն անցել է իր հավերժական ընթացքի 23 տարվա ճանապարհը: Ամեն ժողովուրդ չէ, որ երջանկություն ունի ապրելու իր ազատ Հայրենիքում: Հայ ժողովրդին հաջողվել է պայքարի, դժվարությունների, զրկանքների նաև համախմբվածության, միասնության, նվիրումի և ինքնակազմակերպման շնորհիվ կերտել երկու անկախ պետականություն. Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն: Մեր ժողովրդի լավագույն ցավակներն իրենց կյանքն են գոհաբերել հանուն Հայաստանի Հանրապետության՝ պարզելով մեզ Հայաստանի Հանրապետությունում խաղաղ ապրելու երջանկությունը: Ողջ մնալու մեր մեղքը կարող է ունենալ միայն մեկ արդարացում. ամնացորդ նվիրվել հանուն Հայաստանի Հանրապետության հզորացման, շենացման և զարգացման: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ մեզ բոլորիս տարվա մյուս բոլոր օրերն իմաստավորող այս գեղեցիկ օրվա կապակցությամբ:

Փառք հայ ժողովրդին:

Կեցցե Հայաստանի Հանրապետությունը: